

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐԿԱ  
ԱՌԹԻՎ**

31.08.2011

Միրելի աշակերտներ, ուսանողներ, հարգարժան ուսուցիչներ և կրթության  
համակարգի նվիրյալներ,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ գիտելիքի օրվա առթիվ:

Դեպի գիտելիքի անեզր աշխարհ մուտքն ազդարարող այս օրը մեզ լրացուցիչ առիթ է  
ընձեռում վերաարժևորելու օրվա խորհուրդն ու կարևորությունը, ընդգծելու  
գիտելիքի անփոխարինելի դերը մարդկության պահպանման ու առաջընթացի  
գործում:

Այսօր, առավել քան երբևէ, մենք տեսնում ենք օրեցօր ուժգնացող գիտելիքի  
նշանակությունն ու դերակատարությունը: Այն դարձել է ժամանակի հրամայականն  
ու քաղաքակիրթ հասարակության կառուցման միակ ու ճշմարիտ ուղին: Իսկ  
դրանում պետական հոգածությունից, կրթության համակարգի որակի և  
արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող ծրագրերից զատ,  
անչափ կարևոր է Ձեր՝ սովորողներիդ և ուսուցանողներիդ համագործակցված ու  
նպատակաուղղված աշխատանքը:

Հարգարժան ուսուցանողներ, Ձեր գործն իսկապես նվիրական է, քանզի գիտելիքի  
միջոցով դուք մեր մատաղ սերնդին տալիս եք աչքեր՝ աշխարհին առավել պարզ,  
հպարտ ու անահ նայելու, կյանքում գերի ու անգետ չլինելու համար: Եվ եթե  
յուրաքանչյուր սովորող հենց այս գիտակցումով մոտենա կրթական գործընթացին և  
չզլանա համալրել իր գիտելիքների պաշարը, ապա նա կդառնա հոգով առավել բարի,  
մտքով արի և հասարակությանը պիտանի զավակ:

Կրկին շնորհավորելով բոլորիս այս տոնական օրվա կապակցությամբ՝ ցանկանում  
եմ, որ նոր ուսումնական տարին լինի արգասաբեր՝ լի հաջողություններով ու  
ձեռքբերումներով, որոնք ամուր հիմնաքար կդառնան նաև մեր նորանկախ երկրի  
շենացման գործում:

Բարին ընդ Ձեզ:

***Լավագույն ցանկություններով  
ՀՀ Արմավիրի մարզպետ՝  
Աշոտ Սարգսի Ղահրամանյան***

